



«Եկամտաւոր Պատօն»։ — Միքայէլ Մանուկիսան և Սուբէն Քոչարեան

ԱՐԻԵՍՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Խորհրդային Միտթեան ժողովուրդների արևեստների եւ թատրոնների առաջին համամիութենական Օլիմպիադին Մոսկայում՝ մասնակցել են Հետեւեալ երկիրների Հետեւեալ թատրոնները։ —

1. Ռուսասանից՝ ա) Վախտանգովի անդան Մոսկայի Գեղարքեստական թատրոնը եւ բ) Լենինգրադի Բանտորսկան Երիտասարդութեան թատրոնը։

2. Ռեյալնայից՝ ա) Կրամնավուսակութատրոնն ու բ) Մանր Ճեւերի «Ռեպան Պրոլետար» թատրոնը։

3. Բելորուսիայի Պետական թատրոնը։
4. Հեռական Պետական թատրոնը Բելորուսիայում։
5. Վրաստանի Ռուսթավելու անւան Պետական թատրոնը։

6. Ադրբեյջանի Գեղարքեստական թատրոնը։
7. Հայաստանի Պետական թատրոնը։
8. Ազգեկանանից՝ ա) Պետական Դրամատիֆական թատրոնը ու բ) Պետական Երաժշտական թատրոնը։
9. Թուրքմենստանի Պետական թատրոնը։



Բանկիրների երգեցիկ խումբը

10. Թարարուանից՝ ա) Պետական Դրամատիքական թատրոնում եւ բ) Պետական Օպերային:

11. Բանկիրների թատրոնը;
 12. Կիրզիկների թատրոնը;
 13. Մարիների թատրոնը;
 14. Լատիների Դրամատիքական Ստուդիան:
- Եթէ ընդհանուր ակնարկով մօտենալու լինենք Օլխովիադին մասնակցելու եկած թատրոններից ցուցադրած աշխատանքներին, կարելի է սրակել նրանց հետեւեալ չիմսական մօտեցումներով.
- ա) Բառ արւեստի ձեւի,
բ) Բառ արւեստի բովանդակութեան,
տ) Բառ արւեստի խորութեան,



«Խարաբալա». — Բեմի վրայ են Աւետիսեան, Գուլազեան, Շամիրխսանեան, եւայլն:

դ) Բայս արւեստի նախնական նւագումների.

Նայած թէ, ի՞նչ թատրոնից ի՞նչ կարելի է պահանջել եւ ի՞նչ թատրոնի աշխատանքի մէջ ո՞ր կողմն է առաւելադէս ընդգծած:

Պէտք է խոստվանել, որ առջասարակ Օլիմպիադի ու շագրութեան կենարոնը աղդային հանրապետութիւնների տարածյալ թատրոնական էին արւեստի ասպարիզում: Կարծես թէ Ռուսաստանի հիմնական թատրոնների նւագումներն այնպիսի հասկանալի ճշմարտութիւններ էին, որոնց վրայ առանձնապէս կանգ առնել չէր հարկաւոր: Այսպէս, ումը չէր յայսնի արւեստի բարձրութիւնը մի այնպիսի թատրոնի մէջ, ինչպիսին է, օրինակ, Մոսկվայի Վախտանգովի անւան Գեղարւեստական թատրոնը, որի հռչակը ոչ միայն Խորհրդային Միութեան երկրների սեփականութիւնն է, այլ եւ կարմիր գծից գուրս երկրների: Նրա ցուցադրուծ կարլ Գոցցիի «Ճուրանգուուր» համաշխարհային թատրո-

նական արւեստի գլուխ-գործոցների մէկը կարելի է համարել:

Ամենից գնահատելին, թէ՝ քաղաքական եւ թէ՝ պատմական տեսակէտից, այն երկրների թատրոնների նւագումներն էին, որոնք ցարական իշխանութեան օրով հալածանքի եւ արգելքների շղթաներով էին կաշիանդւած եւ որոնց համար սովետական իշխանութիւնը, շնորհիւ իր վարածագույն քաղաքականութեան, անսահման կարելիութիւններ է ստեղծել, ոչ միայն եղածը զարգացնելու, այլ եւ ստեղծելու նոր արժեքներ այն ժողովուրդների մէջ, որոնք մինչ յեղափոխութիւնը՝ անպամ գիր եւ գրականութիւն չունեին:

Եւ, օրյեկտիվ լինելու համար, պիտի խոստավանել, որ Մոսկվայի Օլիմպիադը ցուցադրեց արւեստի զարգացման այնպիսի անակնականներ փոքր ժողովուրդների մէջ, որոնց մասին չէր կարելի երազել:

* * *

Արևեստի ձեւի լաւագոյն նմուշը աւելի Վրացիները: Վրաստանի իրենց մեծահռչակ



Վրացական թատրոն. — «Անգոր»

բանաստեղծ Ռուսթավելու ամւան Պետական Դրաման ցուցագրեց բեմական կառուցածքի եւ դերասանական արտաքինի մի չափուած որակ: Այդ թատրոնի ամբողջ աշխատանքը ձեւի կատարելութեան մարմացումն էր, մի համուգամանք, որ կարաղ էր անգամ մեծահամբաւ թատրոնների նախանձը շարժել: Նա տեղ բեմական արտաքին ձեւակերպման, դերասանական խաղի, արտաքին շարժաձեւի, բիթմի, ինստ նացիսյի, անմպերամբնուի մի այնպիսի թարմ, ինքնասիպ մօտեցում, որ չէր ընթացել մեծ թատրոնների ընդօրինակութեան շաւիզներով: Մասսայական աեսարանները ներկայացումների մէջ, երբ բեմի վրայ երեւան են գալիս մի քանի տասնեակ գերատաններ, տարւում էին մի աննախընթաց կազմակերպութեամբ ու ներդաշնակութեամբ: Խոկ լճուղի համար այդ այլուր առաջ այլուր առաջ ամբէնը կրում էր ինքնուրոյն, ազգային արեւոսի ոճի գրոշմը:

Թատրոնի գեղարւեատական զեկավարը, մի երիտասարդ բէժիսէօր, Սանգրո Ախմետել ին, իր ներկայացումներն Օլ խմիլի ցուցագրելուց առաջ այսպէս բնորոշեց իր գեղարւեատական ըմբոնումը ժամանակական թատրոնի մասին:


«Ազգային թատրոն ստեղծելու գաղափարն, ասաց նա, տարիներ շարունակ եղել է իմ հիմնական նպասակը: Սխալ է կարծել, թէ ես սուսական թատրոնական դրագոցի աշակերտն եմ: Ես իմ ոէժիսէօրութիւնը սպարել եմ ոչ թէ Մոսկվայում, այլ մեր վրացական գիւղում, երբ մասնակցում էի սովորվական մասսայական տօնակատարութիւններին ու թատերախաղերին, որոնք են՝ Քեյնորա, Գեորգորա, Չրիլիրանա, Բերիկորա: Թատրոնն ինձ համար մի գործողութիւն է, ամփոփուած տարածութեան մէջ: Ամբէն մի գարաշրջան իրայառուկ միջոցներով է լուծում տարածութեան ինսպիրը թատրոնի մէջ: Այլ էր չին յանական չառարտկակարգի թատրոնական տարածութիւնը, այլ միջին դարերի կրօնական գերիշխանութիւնը (ինչեւրիտ-

ներ), այլ մոր դարերի բուրժուազիայինը: Ես գտնում եմ, որ ժամանակակից սլրողետարական հասարակակարգը գեռ եւս չի լուծել իր թատրոնի տարածութեան պրոբլեմը: Մենք պիտի ազատագրենք լուրժաւակիայից մեզ ժամանակութիւն մնացած թատրոնական բեմի այդ քառակուսի արկղից: Վրացական թատրոնն այժմ ուսումնակրութ է վրացական ժողովրդական հանդէմները եւ նրանց մէջ գանում սաղմերը, որոնք ժամանակակին պիտի դան բաւարարելու այն պահնջները. որ առաջադրում է պրոլետարական թատրոնը: Մօտիկ ազագայում մեր թատրոնը կ'ասի իր վերջնական խօսքը: Ես գտնում եմ, որ թատրոնական արևեստի մէջ առաջնութեան իրաւունքը խօսքին չի պատկանում: Հանդիսականի վրայ ազգելու համար բացի խօսքից կան և այլ միջոցներ — ձեւ, պլատիկա, բիթմ, երաժշտութիւն եւ այլ պայմաններ, — որ ես աշխատել եմ օգտագործել Օլ խմագիտին ցուցագրելիք իմ «Անզօր» եւ «Լամարա» բեմագրաւթիւնների մէջ:»

Եւ պիտի ասել, որ Ախմետելին արգարացրեց իր խօսքերը իր ցուցագրած ներկայացումների մէջ:

«Անզօր»ի նիւթը առնեած է ուստերէնից, իվանովի «Զարահագնացք» պիէսից, որ փոխագրւած է վրացերէնի, ըստ կովկասեան ազգագրական եւ աշխարհագրական պայմանների: Գործողութիւնը կատարւում է Դաղստանում, գործողութեան վայրն է է Հիւսիսային կովկասի երկաթուղու կայսրաններից մէկն ու Ազգենների մի գիւղ, ուր յեղափոխութեան այն աշեղ տարիներին միմեանց են բաղկաւում կարմիրներն ու սպիտակները, յեղափոխութիւնն ու հակայեղափոխութիւնը:

«Լամարա»ն մի բանաստեղծական լեգենդա է, վրացական բաղկացուցիչ ցեղերից մէկի՝ Խեվուրների՝ կեանքից, որ սունաւորն ձեւով գրել է վրացական արդի յայտնի գրող Գր. Ռոբակիձէն: Նրա բովանդակութիւնը չի առնեած յեղափոխութիւնը: Դա երկու, ի-



Վրաստանի թատրոն.— «Անգօր»
Լաւագոյն դերասան՝ Վասացէ

րար Գիղիքասկէս նման, լիեվուր եղբայրների բուռն սիրոյ պատմութիւնն է գէսլ ի հրաշագեղ Լամարան, որ պատկանում է թշնամի մի այլ հարեւան լեռնական ցեղի:

Եթէ առաջին պիէսի մէջ, մանաւանդ մասսայական տեսարաններում։ Ախմետէ-Լին կարսղացաւ առաջ յեղափոխութեան խօլական էնուուզիազմը, ապա երկրորդի մէջ նա առեց վրացական հարազատ կեանքը, վրացական աերմպերամէնա, լեռնական ժողովրդի րիթմի եւ պլաստիկայի ամբողջ գեղեցկութիւնը։

Եւ այդ էր պատճառը, որ վրացական թատրոնը ընդհանուրի հիացմունքի եւ բարձր գնահատութեան առարկան գարձաւ։

Վրացական թատրոնն ունի անցեալ կուլտուրա։ Նրա սկզբնաւորութիւնը զուգագութեամ է հայկական թատրոնի սկզբնաւորութեան հետ։ Նա հիմնւել է հայ-

կական թատրոնից մի քանի տարի առաջ— 1852 թւին, Թիֆլիսում։ Նա ընթացել է համարեա նոյն ուղիներով, ինչ որ հայկական նախայեղափոխական թատրոնը, այն տարբերութեամբ միայն, որ մինչդեռ հայկական թատրոնի սոցիալական խարիսխը եղել է հայկական գաղութային առեւտրական գասակարգը՝ Պոլսում, Թիֆլիսում, Բագւամ եւ Մոսկվայում, վրացական թատրոնի համար նոյն դերը խաղացել է նրանց ազնւականութիւնը՝ Թիֆլիսում ու Քութայիսում։

Այսօրւայ յետ-յեղափոխական թատրոնը՝ վրացական հին թատրոնական կուլտուրայի վրայ յենւած՝ արևեստի զարգացման երկրորդ, աւելի բարձր փուլն է ապրում։

Օլիմպիադը ցուցադրեց, որ Վրաստանում թատրոնական արևեստը կամոց չի առել, որ նա խոշոր գայլերով առաջ է գնում։

* * *

Բովանդակութեան տեսակէտից, այն բովանդակութեան՝ որ արդիւնք պիտի լինի ուստական մեծ յեղափոխութեան իրադարձութեան եւ բաւարարի իշխանութեան եկած բանւոր գասակարգին ունչներին ուղղձերին—գեղեցկիկ օրինակը տւեց Բելորուսիայի Պետական թատրոնը։

Բելորումները պատկանում են Խորհըրդային Միութեան ասպարէզ իջած «նոր» ժողովուրդների թւին։ Յարական իշխանութեան օրով նրանք առանձին ազգութիւն չեն ճանաչում։ Նրանք համարում էին ուստական մեծ ցեղի բազկացուցիչ, անբաժան մասերից մէկը։ Զիար եւ բելորուսական գատ կուլտուրա։

Միայն յեղափոխութիւնից յետոյ Բելորումները յայտարարեցին իրենց ինքնուրոյն ազգութիւն՝ իր բոլոր առանձնայական կութիւններով։ Այդ իսկ պատճառով բելորուսական թատրոնը կարելի է համարել հոկտեմբերեան շարժման հարազատ զաւակը։ Եւ չնայած իր այդ մանուկ տարի-

քին, նու կարողացաւ Օլիմպիադին տալ բռ-
վանդակութեան տեսակէտից մ'ի այնպիսի
արւեստ, որ ճանաչեց մ'իակ ուղիղն ու ըն-
դօրինակելին մ'իւս ըոլոր ազգային թատ-
րոնների համար:

Նա Օլիմպիադին ցուցադրեց երկու
ներկայացում՝ «Գուտառ» եւ «Միջփոթորի-
կային» վերտառութիւններով, որնցից յա-
ջողն էր «Գուտառն»:

«Միջփոթորիկային»ի ըովանդակութիւ-
նը առնւած է յեղափոխական կարմիր-բա-
նակայինների կեանքից, իսկ «Գուտառ»ի ըո-
վանդակութիւնը՝ գործարանային կեանքից,
ուր երեւսն են գալիս սոցիալ խառական շի-
նարարութեան եւ բանւորական կենցաղի
հրատապ ինսդիրները:

«Գուտառն» — դա մ'ի ապակի արտա-
դրող գործարան է Բելօրուսիայում: Ապա-
կիներն այդտեղ պատրաստում են զին,
նախայիշտափոխական գործիքներով: Եւ ա-
հա, մ'ի հասարակ բանւոր, իր քրանաշնան
աշխատանքով ու մտայլացութեամբ մ'ի օր
կատարելագործած գործիք է հնարում, որ

ասկակու արտադրութիւնը պիտի մ'եքենա-
յացման ենթարկէ, առավ աւելի բարձր
որակ, ցածր ինքնարժէք եւ խոշոր քանակ:
Մ'եքենայի այդ գիւտն օգտագործուում է,
մ'եքենան պատրաստ է. սակայն աշխատե-
ցնելու նախօրեակին, գործարանի մ'էջ աշ-
խատող հակայեղափոխական բանւորների
մ'ի խմբակ պայմանագրում է նորահնար մ'ե-
քենան: Եւրոպացի մ'ի ինժիներ, որ հրա-
ւիրում է գործարանի կողմից, մ'եքենան
նորից շակում է եւ ընդհանուր խանդակա-
ռութեան տակ գործարանը սկսում է աշ-
խատել տեխնիքական այդ նոր նւաճումնի:

Բեմի վրայ անդրագանում է կեան-
քից վերցրած գործարանային հարազար ի-
րագարձութիւնը, ներքին փոխ-յարաբերու-
թիւններն ու աշխատանքի պաֆոսը: Ու
թատրոնը կարողացաւ այդ ամբէնը տալ
տեխնիքական բարձրորակ մ'իջավայրի մ'էջ,
պատշաճ ձեւակերպութեամբ, համոզիչ
շեշտավ եւ միաւմեների զուսպ, անշափա-
զանց ընդգծումներով:

Ներկայացումից յետոյ, մաքերի փոխա-



Հրէական Թատրոն

նակութեան ժամանակ, բելօրուսական թատ- թեամբ, հոգեբանական մոմենտների պեր-
րոնի այդ ներկայացումը որակեց իրեւ լուծումով եւ բեմական խօսքի արենատով:
մի աշխատանք, որ արձագանգում է ժա- Մասնաւորելով մեր խօսքը չայտատա-
մանակի ողաւն, որ հանդիսանում է յեղա- նի Պետական թատրոնի մասին, պիտի ասել,
փոխութեան սոցիալական պատերն ու իր որ, ճիշտ է, նրա ներկայացումները չունեին
բովանդակութեամբ գալիս է նպաստելու միւս երկրների թատրոնների բեմադրու-
սոցիալիզմի կառուցման գործին եւ բնդ- թեան ու հագուստի արտաքին շուքն ու



Հրէական թատրոն

հանուր սամանը ընդգծում է այն ուղին, որպէս պիտի ընթանայ պրոլետարական թատրոնական արւեստը, երբ հարցը վերաբերում է նրա բովանդակութեան խնդրին:

* * *

Եթէ վրացական եւ բելորուսական թատրոնները տւին ժամանակակից խարհը դային թատրոնների ձեւն ու բովանդակութիւնը, հայկական եւ հրէական թատրոնները տւին թատրոնական արւեստի խորութիւնը, այն խորութիւնը, որ պայմանագրուած է գերասանական խաղի լրջութեամբ, բեմական ապրումների ուժինու-

փայլը: Հայտատանը հարուստ երկիր է, և ոչ ել երեւանը մեծ քաղաք: Նա դեռ եւս չունի արժանավայել թատրոնական շենք, եկածը հին, անշուք ակմբային մի դաշլիճ է: Անշուշտ, արտաքին այս հանդամանքները չեին կարող իրենց գրոշմը չգնել հայտատանի Պետական թատրոնի ներկայացումների վրայ:

Սակայն ի փոխարինումն այդ ամէնի հայերը բերել էին թատրոնական մի այն պիտի բարձրորակ արւեստ, որ, ինչպէս ասացինք վերը, արտայայտելով ինքնամփոփման եւ ինքնախորացման մէջ, գարձաւ նրա յաջողութեան պատւանդանը: Այսաեւ արգէն առաջնութեան պատիւը



«Եկամտաւոր Պատօն»։ — Միքայել Մանուկյան եւ Վաղարշեան

սպատիանում՝ էր Հայերին, ինչպէս եւ նրա համար մ'ի պատմական դպրոց, որով անցել է նու գէպի նոր բարձունքներ։

Հին թատրոնական կուլտուրան, Ադամեանի, Մնակեանի, Սիրանոյշի, Հրաժանյի, Տէր-Դաւթեանի, Աբելեանի, Փափազեանի արւեստը, հայ թատրոնի գերասանական կոլլեկտիվի համար անհետ չէին կորել։ Աւելի եւս՝ վետերանների արւեստը եղել է

նրա համար մ'ի պատմական դպրոց, որով անցել է նու գէպի նոր բարձունքներ։

Եւ արդարեւ, եթէ նախայեղափոխական հայ թատրոնը եղել է անհատ տաղանդների ցուցադրութեան մ'ի վայր, այժմեան թատրոնը ներկայացնում է իրենից գեղարւեստական եւ գաղափարական շաղախով կոփւած մ'ի ամրակուս։ Հուաքա-



Արմեն Գուլլակեան. — Հայ Պետ. Թատրոնի բեմիսօրը

կան միութիւն: Նրա բեմական արտաքին ձեւակերպումն այլ եւս պատահական ֆոն չէ գերասանական խաղի համար, այլ օրգանական մասը ամբողջ ներկայացման: Դերասանական խաղը չունի կատարներ եւ ստորաններ, այլ ընթանում է միահամուռ ներդաշնակութեամբ, որի վրայից անցել է կարսղ բէժիսէօրի ստեղծագործական մատյացութիւնը, որ շտկել. ներդաշնակել, ճաշակուորել եւ համադրել է ամբողջ գործողութիւնը բեմի վրայ: Թատրոնական տարածութեան սահմանները, նախայեզրափոխականի համեմատութեամբ, ընդարձակել են թէ՛ հորիզոնական եւ թէ՛ ուղղահայեաց գծերով: Հանդիսատեսին խօսքը տրւամ է երաժշտութեան, ժէսթի, ըիթմի եւ լուսաւոր էֆֆեկտների օժանդակութեամբ: Հնչունական անսակէտից նա ա-


զատագրւել է հին թատրոնի կեղծ կլասիքական շեշտագրութիւնից, իսկ առողջանութեան ու ձայնագրութեան տեսակէտից հայ գերասանները հանում են լուսագոյն դերասանների արեւատին: Հայ թատրոնն այլ ևս գաւառական թատրոնի մակարդակի վրայ չէ կանգնած եւ իր ստեղծագործութեամբ կարող է մրցութեան դուրս գոյլ լաւագոյն սուս թատրոնների հետ:

Այժմ թատրոնի մէջ առաջին խօսքը պատկանում է բէժիսէօրին: Եւ այդ բէժիսէօրն ունի այժմեան հայ թատրոնը: Արմեն Գուլլակեանը, այդ երիտասարդ բէժիսէօրը, իր մտայլացութեամբ, երեւակայութեամբ, ստեղծագործական մաքով, գեղարվեստական չափի եւ տակտի ըմբռնումով խոշոր արւեստագէտի ըոլոր տւեալներն ունի:

Հայաստանի Պետական թատրոնը ցուցադրեց նաեւ ուժեղ գերասաններ, որոնք կարողացան իրենց խաղի խորութեամբ, գերի ըմբռնումով, վարակելու եւ աղգելու կարողութեամբ ու ընկանա արւեստով թատրոնի համար էտեղծել մի այնպիսի «աղիւս», որ միւս ազգային թատրոնների մէջ պակաս չափով էր նկատում:

Այսպէս՝ խմբի մէջն էին Հրաչեայ ներսէսեանը, իր խորը մտածւած եւ կիրթխաղով. Աւեա Աւետիսեանը՝ իր բազմակողմանի, ժամկային գերերով, Սուրեն Քոչարեանը, գեռ եւս երիտասարդ, սակայն խոշոր տեմպերամէնտի տէր եւ բեմական տւեալներով, ոսյն երիտասարդներից են եւ Շամիրիսանները եւ ուրիշները: Խմբի մէջն են նաեւ վաստակաւոր գերասաններ Արուս Ուկաննեանն ու Միք. Մանուէլեանը, Յամիկն ու Գուլազեանը, որոնք իրենց ուսերի վրայ կրում են մեր հին թատրոնական արւեստի լաւագոյն աւանդները:

Հայ Պետական թատրոնը Օլիմպիադին ցուցադրեց երկու ներկայացում, «Յասում»



Հրաչ Ներսէսիան.— «Յասում»ի մեջ

Եւ «Պէտօ», իսկ Օլխմովիադից գուրս, գաստրոլների կարգով Սունդուկեանի «Խաթարալան» եւ թարգմանական գրականութիւնից՝ «Եկամաւոր Պաշտօնն» ու «Հրէ կամուրջը»:

«Յասում»ը պատական սլիքս է, որի բռվանդակութիւնն առնւած է հաւաքական տնտեսութիւնների շարժման շրջանից եւ փոխադրւած է հայերէնի ըստ Հայաստանի գիւղական պայմանների: «Պէտօ»ն պատկանում է մեր անւանի գրամասուրդ: Գ. Սունդուկեանին: Սակայն այդ պիէսը չէ բեմադրւած նախկին շաբլոնով, այլ նա բէժիշէօր Գուլլակեանի ձեռով ըեմական վերամշակման է ենթարկւած, երեք գործողութիւնը տասերեք էսիզոտի է վերածւած, տէքստից առանց մի բառ կրճատելու կամ փոփոխելու, եւ գուրս բերւած տիպերը խոացրւած են ըստ գասակարգային ընթանութիւնի:




Սուրէն Քոչարեան.— «Յասում»ի մեջ


Եւ եթէ Հայաստանի Պետական Թատրոնը լաւագոյն գնահատականներից մէկը ստացաւ Օլխմովիադի ժիրիի կողմից, մեր կարծիքով դա խրախուսական գիտութիւններով չէր արւած եւ ոչ էլ չափազանցութեամբ, այլ իրական գնահատումով, որին արժանի էր նա:

★ ★ ★

Միւս թատրոնները, որնց աշխատանքները ես որակեցի իբրեւ նախնական նւաճութեան արևեատի ասովարիզում, ովասկանում են գլխաւորապէս այն ժողովուրդներին, որոնք յեղափոխութիւնից առաջ կամ գիր ու գրականութիւն չւնեին, կամ եթէ ունէին, գեռ եւս խարխափում էին յետամնացութեան յետին շարքերում: Դրանք են ըստ մեծի մասին Խորչրդային Միւս թեամն մահմետական ժողովուրդները, Թուրքերը, Թաթարները, Թուրքմէնները, Ռուզբեկները, Բաշկիրները, Կիրգիզները, որոնց թւում նաեւ մի քանի քրիստոնեայ ժողովուրդներ, ինչպէս օրինակ Օլխմովիադին մամնակցող Մարիները:



Սահման կիոցի «Խարաբալա»
Դերասան Աւետ Աւետիսիսն Զամբալյանի դերի մէջ



«Փետօ».— Զիմզիևի, Վահագոսկան, Տէր-Մուղանան
Պէտօ, ծկուր, դերասան Աւետիսիսն



Սուսնդուկիանցի «Պէպօ». — Պէպօ, Դերասան Աւետ Աւետիսեան
Կակուլի, դերասան Սուրեն Քոչարեան

Այստեղ արդէն Օլիմպիադը ցոյց տւեց թէ շնորհիւ Խորհրդային իշխանութեան վարած քաղաքականութեան ազգային խնդրում՝ ինչափսի՞ հրաշքներ են գործել ցարական իշխանութեան օրով հալածւած այդ տպէտ, կրօնամոլ, յետամնաց եւ յաճախ վայրերարոյ ժողովուրդները՝ ուսման, արւեստի եւ առհասարակ քաղաքակը թութութեան մէջ:

Այն ժամանակ, երբ հին, կուլտուրական Հայաստանը միայն դրամատիկական թատրոն ունի, Դավանի Թաթարները, որոնց նախայեղափոխական ուռու քաղքենին ճանաչում էր իբրեւ շրջիկ հնավաճանումները Մոսկվայի յետամնաց փողոցներում, ունին

եւ գրամատիկական թատրոն եւ ազգային օպերա: Օպերա, որի խոռքը, բովանդակութիւնը, երաժշտութիւնը, կատարողների կազմը ամբողջավին թաթարական է, որ ոնի խոշոր երգչական գերասանական խումբ բեմի վրայ եւ նոյնչափ խոշոր նւազաւումը, եւրոպական գործիքներով, բեմի առաջ:

Թէ՛ դրաման եւ թէ՛ օպերան իրենց բէսլերուարի մէջ ունին եւ թարգմանական ինքնուրոյն պիէսներ: Յուցադրած ինքնուրոյն պիէսներից էր գրամայի մէջ «Իւ»ը որի բավանդակութիւնն առնւած է անցեալ գարի թաթար գիւղացիների կեանքից կալւածատիրական կամայակատարու-



Բաշկիրների Պետական Թատրոն



Ուզեկստանի Երամշտական Թատրոն. — Խմբապար

թիւմների եւ բանութիւմների ըստ ջանում։ Իսկ յուցադրած օպերայի լիբրետոյի նիւթը առնւած է թաթարնոր բանաստեղծ Մազիտ Գաֆուրի «Էշչի» (բանուր) պօեմից, ուր երեւան են գալիս թաթար բանւոր գասակարդի առաջին ընդվզումները։ Օպերայի երաժշտութիւնը, որ ի միջի ոյլոց գրել են երկու հոգի, մի սուս եւ մի թաթար կոմպոզիտոր, ամբողջապէս հիմնած է թաթար ժողովրդական երգերի հզանակների վրայ։

Այս ամենը արգեն կատարեալ նւաճումներ են թաթար ժողովրդի կողմից եւ անսպասելի «սիւրալրիդ» Օլիմպիադի համար։

Նոյն «սիւրալրիդ»ով հանդէս եկան նաև Միջին Ասիայի նախայեղափոխական շրջանում յետամնաց եւ հալածւած ժողովուրդներից մէկը — Ուզբեկները։

Օլիմպիադին մասնակցելու համար նրանք եւս ուղարկել էին երկու թատրոն՝ մէկը գրամատիքական, միւսը՝ երաժշտական։ Երկուուն էլ ամբողջովին ծնունդ խորհրդային իրաւակարգի։ Դրանցից մէկը՝ Պետական Դրաման, հաղիւ տասը տարւայ

պատմութիւն ունի, իսկ երաժշտական թատրոնը ընդամենը հինգ տարւայ։

Նոյն այդ կարճ ժամանակաշրջանումն է պարփակւում նաեւ Ուզբեկստանի թատրոնական գրականութեան, գերասանական խմբի կազմակերպութեան եւ պատրաստութեան, ինչպէս եւ առհասարակ ազգային մամուլի եւ գրականութեան ամբողջ պատմութիւնը։


Եւ չնայած իր այդ մասնուկ տարիքին, կարելի է ասել Ուզբեկստանը փայլեց Օլիմպիադին իր թատրոններով։

Դեռ եւս Օլիմպիադի բացման հանդէսին նրանք ամենքի ուշադրութեան առարկան էին։ Նրանք խոշոր թւոլ տեղ էին բռնել բեմի վրայ իրենց ազգային խայտապէտ տարագրվ, ունէին ասիական երաժըշտութեան օտարութի գործիքներ, որոնց մէջ աչքի էին ընկնում երկարակոթ սաղերը, եզան պէս բառաջող երկարավիզ փողերը եւ կարասների չափ խոշոր «տիպի-պիտոն»ները։

Դրամատիքական թատրոնի ըէպէրտուարից նրանք ցոյց տվին երկու ինքնուրոյն պիէս՝ «Հուջում» (յարձակում) եւ



Ուզբեկստանի երաժշտական թատրոնը. — Փողաւոր գործիքներ



Թագավորական պետական քաղաքացիության

«Բամբակի վնասարարները»: Դրանց առաջնի բավանդակութիւնը հին, նաշապետական կեանքի քայլայման պատմութիւնն է, պայքար՝ «փարավայի» գէմ, կնոջ սօցիալական եւ իրաւական ազատագրութեան համար, պայքար՝ մոլաների տղիտութեան, կրօնական մոլեսանդութեան գէմ՝ յանուն նոր կարգերի, եւրոպական քաղաքակրթութեան եւ սոցիալիստական վերակառուցման: Երկրորդ պիհսի բովանդակութիւնը բնորոշւած է վերնագրի մէջ:

Երաժշտական թատրոնը տւեց օպերաներ եւ ազգագրական-երաժշտական համերգներ:

Նրա հիմնագիրն է եւրոպական կրթութիւն ստացած, գերասան, երգիչ եւ պարող, այժմ՝ Ուզբեկստանի «Ժողովրդական երգի» յայտարարւած կարածակուբովը: Նա հաւաքել է 500ի չափ ուղղեկ ժողովրդական երգեր, եղանակներ, կուսլէտներ, պարեր, որ հետագայում մշակման ենթարկելով դարձել է երաժշտական թատրոնի ներկայացումների եւ համերգների նիւթը:

Այդ ներկայացումներն ու համերգները լրիւ գաղափար տվին Միջին Ասիայի գարերի խորքից ելնող ժողովրդական արևեստի մասին՝ երգի, նւագի եւ պարի բնագաւառում:

Դա արդէն արեւելեան «էկզոտիկա» չէր եւ ոչ էլ սճաւորւած արեւելականութիւն, այլ մի արևեստ, որ բղխում է Արեւելքի բուն ակունքից, որի մէջ լաւում է մերթ Զինգիդ-Խանների ու Խենկթիմուրների հորդաների գայրի երթը, մերթ Միջին Ասիայի տափաստանների խաղաղ գիւղացու քրտնաթոր աշխատանքի բիթմը, մերթ գարաւոր քնից արթնացող ժողովրդի զարթօնքի լինդգը:

Երաժշտական թատրոնի առաջնակարգ գերասանուշիներն էին թամար եւ Գալչար խանումները (Թամար եւ Գոհարիկ Պետրոս-եաններ), որոնց մի առանձին պարձանքով յանձնարարում էր հասարակութեանը թատրոնի կոնֆերանսին: Այդ երկու քոյրերը




Ուզբեկստանի երաժշտական թատրոնի
Կարա - նախուբով

տվին ոլլաստիկայի եւ երաժտութեան անորակելի նմուշներ: Արախստիք էր մանաւանդ թամար խանումնի մենապարը առանց երաժտութեան, լոկ գափի ներդաշնակութեամբ, որ մի չտեսնւած հմտութեամբ խփում էր մի ծերւունի Ուզբեկի, իր մատների հարւածների տակ, ձգւած կաշու վըրայ, տալով բարդ պարի բոլոր նրբութիւնները:

★ ★ ★

Վերածնւող ժողովրդների թատրոնների շարքին է պատկանում նաև մեր կովկասան թուրքերի, Ադրբէջանի թատրոնը:

Ադրբէջանն եւս, վերջին ժամանակ-



Աւգրեկաստանի երաժշտական թատրոն
Կոմիք զարմալ Ուզբեկը



Աւգրեկաստանի երաժշտական թատրոն
Թամարա Խաչիս (Թամորա Պետրոսյան)

ներս հսկայական քայլեր է արել թէ՛
սնառեսական եւ թէ՛ կուլտուր-կրթական
մարզերում։ Այժմ Աղբբէջանը ծածկւած
է գալրցների ցանցերով, գրադիտառթիւնը
հսկայական տոկոսներով առաջ է գնում,
ծաղկում է մամուլն ու գրականութիւնը,
կենցաղի եւ բարքերի մէջ աշադին յեղա-
փոխութիւն է առաջացել։ Եւրոպական ի-
մասուով թրքական փափախի տեղ այժմ
տիրում է եւրոպական գլխարկը, կանանց
«չափայի» տեղ փարփեան տարազը։ Կինը¹
ազատագրում է մահմետական հարէմա-
կան խայտառակ կեանքից, մոլոների եւ
տէրվիչների գարը նիրվանայի ջրերն է
ընկնում։ Թուրք ժողովուրդն իր առաջա-
դիմութեամբ արդէն մրցակցութեան է ու-
զում ելնել հարեւան հայ եւ վրացի ժողո-
վուրդների հետ։ Նա արեւատի ասպարի-
զում՝ ունի կմնաերգատորիա, մի քանի
թատրոն, որոնցից լաւագոյնը, Գեղարւես-
տական թատրոնը, նա ուզարկել է Մոսկա,
Օլիմպիադին ցուցադրելու։

Նախ քան Օլիմպիադի սկիզբը, թրքա-

կան Գեղարւեստական թատրոնը մի շաբք
գասարոլային ներկայացումներ տևեց Մոս-
կայում, թարգմանական եւ ինքնուրոյն
պիէմների բէպէրտուարով։

Ինքնուրոյն պիէմների նիսթը նոյն
շրատապ ինսդիրներն են, ինչ որ այժմ այ-
րում են ամբողջ մաշմետական աշխար-
հը։ Վերածնոդի, զարթօնքի, ընտանեկան,
կրօնական, հասարակական յեղափոխու-
թեան խնդիրներ։ Թարգմանականների մէջ
կային մի շաբք յայտնի ոռւսական եւ եւ-
րոպական պիէմներ, վերջինների թւում
վկիպէտոր չիւկոյի «Ծիծաղող Մարգ»ն ու
Շէքսպիրի «Համլէտ»ը։ Կար մի պիէս եւս
չայերէնից, Շիրվանզադէի «Նամուսօր»։

Թրքական թատրոնը այլ եւս նախայե-
ղափոխական թատրոնը չէ։ Այժմ այլ եւս
բեմի վրա կանանց գերը տղամարդիկ չեն
խաղում եւ հասարակութեան մէջ կանայք
փակ լոժաների մէջ չեն նստում։ Կան բաղ-
մաթիւ գերասանուշիներ, որոնց մէջ՝ մի
շաբք չնորհալի, տաղանդով կանայք։ Տա-



Աղբբէջանի Գեղարւեստական թատրոն.— «Համլէտ» բրեւեն լեզուով

դանդա՞ներ կան եւ տղամարդ գերասամների մէջ:

Այս ամէնը չուսնւած նւաճումներ են թուրք հասարակութեան մէջ, որոնց ականատեսը եղաւ Օլիմպիադը:

Նոյնը կարելի է ասեւ նաեւ միւս մաշմետական ժողովուրդների մասին, որոնցով հարսւատ է Խորհրդային Միութիւնը, թուրքմէնների, Բաշկիրների, Կիրգիզների, եւայլն մասին, որոնք կրկին Մոսկվա էին եկել իրենց պետական թատրոններով, գե-

յաջողութիւն ունեցաւ նաեւ երեւանի Պետական կոնսերվատորիայի երգչուան խումբը, որ համերգներին մրցակցութեանը մասնակցեց զգային տարազով (Սասունցիների եւ Մշեցիների), երիտասարդ երաժշգույք կար Զաքարեանի խմբավարութեամբ, տալով մի շարք հայ ժողովրդական եւ յեղափօխական քառաձայն մշակւած երգեր:

Նոյն յաջողութեանն արժանացաւ նաև Հայաստանի Հայ Աշուղների անսամբլը



Հայաստանի Կոնսերվատորիայի երգիչներ Խումբը

բասանական կազմով, ինքնուրույն և թարգմանական պիեմների բէպէրատուարով, միանգամայն կիրթ բեմական խաղով:

Այս Օլիմպիադը մի ցայտուն նշանացոյց էր, թէ Խորհրդային Միութեան նախկին յետամնաց ժողովուրդներն ինչ չափսի թափով, ինչպիսի եռանգով ու խանգամառութեամբ են փարել ազգային վերածննդի, ազգային մշակոյթի գաղափարին եւ ինչ պիակ հակայական քայլեր են առել այդուղութեամբ, ազգային՝ ըստ ձեւի. եւ պրակտարական՝ ըստ բովանդակութեան:

* * *

Վերջացնելով յօդւածո՛ չպիտի մոռանամ յիշելու, որ Օլիմպիադին փայլուն

Շարա Տաղեանի ղեկավարութեամբ, որ տւեց մեր զին աշուղական արւեստից — Բաղդասար Դարրից, Սայաթ-Նովայից, Նաղաշ Յովաթմանից, Աշուղ Զիվանիից, Միսկին Բուրջիից, եւայլն, զմայլելի նըմուշներ:

* * *

Օլիմպիադը մի փորձութեան վեղեցիկ դպրոց էր, որից պիակ դասեր առնի եւ մեր արտասահմանի գաղութահայութիւնը:


Ամէն անգամ, երբ խօսք է լինում Խորհ. Հայաստանի շինարարութեանը աշակեցելու մասին՝ արտասահմանի հայ գաղութները թող յիշեն եւ իմանան, որ պատմութիւնը

երթեք կանգ չի առնում եւ ազգերը մեռ-
եալ վիճակ չեն ապրում, այլ ամենքն էլ
աշխատում, ստեղծագործում՝ եւ առաջ-
դիմում են, եւ վայ նրան, ով ետ է մնում:
Ամէն մի աջակցութիւն, ամէն մի գործ
լու է, երբ տեղին եւ ժամանակին է կա-
տարում: Իսկ այն աջակցութիւնը, որ կա-
րող են ցոյց տալ արտասահմանի գաղութ-
ները շինարարութեան ու վերակառուցման
տեսդով բռնւած երկրին՝ ունի միայն մի

գեր — աւելացնել մի շերտ՝ չայաստանում
ապրող եւ աշխատող աշխատաւոր ժողո-
վորդի նւաճումների կուտակման վրայ,
նւաճումներ, որ յաճախ առիթ է լինում
ցուցադրելու կուլտուրական այսպիսի մըր-
ցակցութիւնների ժամանակ:

ԿՈՐԻՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Մասկա.



«Եկամտաւոր Պատօն»: — Պարի տեսարան